ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-3-1-Ա

ք. Երևան 09.03.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի մարտի 9-ի նիստում քննարկեց 2023 թվականի փետրվարի 17-ին հայտատուի ներկայացուցիչ Հունան Տեր-Վարդանյանի կողմից ներկայացված՝ «Սպորտ կոկտեյլ» ՍՊԸ ընկերության (Երևան, Ծովակալ Իսակովի պող., շ. 15/3, ԱՄ) «ՍՊՈՐՏ ԲԱՐ» (№20221551) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 2-րդ, 7-րդ ենթակետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն և բաղկացած է սոսկ երկրաչափական պատկերներից, գծերից, ինչպես նաև դրանց զուգակցումից, որոնց համակցությունը չի տալիս դրա մեջ մտնող տարրերի ընկալումից տարբերվող ընկալման այլ որակական մակարդակ, կամ բաղկացած է գրաֆիկական յուրահատուկ ոճ չունեցող առանձին տառերից, թվերից, որպես բառ չընկալվող տառերի զուգակցումից և, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ բացառապես բաղկացած է պարզ երկրաչափական պատկերի՝ շրջանի մեջ ներառված տարբերակիչ հատկություն չունեցող «SPORT» բառից, որը «ՍՊՈՐՏ ԲԱՐ» և «COCKTAIL» գրառումների և կոկտեյլի ոճավորված բաժակի պատկերից, ինչպես նաև «ՍՊՈՐՏ ԲԱՐ» արտահայտությունը ներառող ապրանքային նշանը չի կարող գրանցվել խնդրարկված ծառայությունների համար, քանի որ այն կարող է սպառողներին: Կարգի 102-րդ, 104-րդ կետերի համաձայն, եթե ապրանքային նշանի բոլոր տարրերով արտահայտված հավաքական

իմաստը չպահպանվող տարրի իմաստից բացի այլ իմաստ չի արտահայտում, այսինքն՝ սպառողին այլ իմաստ, միտք չի հաղորդում, քան հաղորդում է տվյալ ոչ պահպանունակ տարրը և այդ պատճառով սպառողի մեջ այլ պատկերացում (ասոցիացիա) չի առաջանում, ապա համարվում է, որ տվյալ չպահպանվող տարրն ապրանքային նշանի գերիշխող մաս է կազմում: Եթե չպահպանվող տարրը կազմում է ապրանքային նշանի գերիշխող մասը, ապա եզրակացություն է արվում տվյալ նշանը որպես ապրանքային նշան գրանցելու անհնարինության մասին և որոշում է ընդունվում նշանի գրանցումը մերժելու վերաբերյալ: Օրենքի 11-րդ, 13-րդ հոդվածների համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես ապրանքային նշաններ և բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, մասնավորապես նկարագրական բնույթի տարրերի վրա, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով: Ինչ վերաբերում է 43-րդ դասի մնացած մյուս ծառայություններին, ապա «SPORT», «ՍՊՈՐՏ ԲԱՐ» գրառումները ներառող նիշը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցում՝ հաղորդելով կոնկրետ տեղեկատվություն մատուցվող ծառայության բնույթի վերաբերյալ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 7-րդ կետերի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն և բաղկացած է սոսկ երկրաչափական պատկերներից, գծերից, ինչպես նաև դրանց զուգակցումից, որոնց համակցությունը չի տալիս դրա մեջ մտնող տարրերի ընկալումից տարբերվող ընկալման այլ որակական մակարդակ, կամ բաղկացած է գրաֆիկական յուրահատուկ ոճ չունեցող առանձին տառերից, թվերից, որպես բառ չընկալվող տառերի զուգակցումից և, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ բացառապես բաղկացած է պարզ երկրաչափական պատկերի՝ շրջանի մեջ ներառված տարբերակիչ հատկություն չունեցող «SPORT» բառից, «ՍՊՈՐՏ ԲԱՐ» և «COCKTAIL» գրառումներից և կոկտեյլի ոճավորված բաժակի պատկերից, ինչպես նաև «ՍՊՈՐՏ ԲԱՐ» արտահայտությունը ներառող ապրանքային նշանը չի կարող գրանցվել խնդրարկված ծառայությունների համար, քանի որ այն կարող է սպառողներին

մոլորության մեջ գցել ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցում՝ հաղորդելով կոնկրետ տեղեկատվություն մատուցվող ծառայության բնույթի վերաբերյալ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել հայտատուի ներկայացուցիչ Հունան Տեր-Վարդանյանի կողմից ներկայացված «Սպորտ կոկտեյլ» ՍՊԸ ընկերության «ՍՊՈՐՏ ԲԱՐ» (№20221551) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ